ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ №5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խաղը որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց

Մասնակից՝ Աստղիկ Սողոմոնյան

Դպրոց՝ <<Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան №9 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Աննա Ստեփանյան

Երևան 2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Խաղերի դերը կրտսեր դպրոցականների անձի զարգացման գործընթացում.....5
2. Խաղերի դերը և նշանակությունը որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց.....9

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքի համար ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է թե՛ գիտական և թե՛ պրակտիկ գործոններով:

Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Խաղի ընթացքում երեխան դրսևորում է որոշակի ինքնուրույնություն, ձգտում է ինքնահաստատման, ձևավորվում են բնավորության որոշակի գծեր:

Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հասակակիցների հետ փոխշփումներ, հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներից կարելի է առանձնացնել այն ուսուցողական խաղերը, որոնք համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով:

Երկրորդ դասարանում մայրենի լեզվի դասաժամերին իրականացվող բառակազմական և վերլուծական-գործնական աշխատանքները, որոնք կազմակերպվում են խաղերի ձևով, նպաստում են սովորողների՝ հայրենիքի ճանաչողության խորացմանը և լեզվական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորմանը:

Երեխաներն աստիճանաբար կարողանում են պարզ բառերից կազմել բարդ և բարդածանցավոր, ինչպես նաև հոդակապով և անհոդակապ բառեր: Այդ կարողություններն առավել զարգացնելու նպատակահարմար միջոց են հաճախակի կազմակերպվող բառավերլուծական բնույթի մի շարք խաղեր, որոնց ժամանակ աշակերտներն առիթ են ունենում ընտրելու արմատը կամ ածանցը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **խաղը որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ներկայացնել խաղերի դերը և նշանակությունը կրտսեր դպրոցականների անձի զարգացման գործընթացում,
- ուսումնասիրել խաղերի դերը և նշանակությունը որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք ինտերնետային հոդվածները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 17 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և այլոց:

Խաղը հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը[1]:

Խաղը պատմական ծագում ունի, այն առաջ է եկել պատմական զարգացման որոշակի փուլում, երբ դրվել է մեծերի աշխարհի և երեխայի աշխարհի բաժանման հիմքը, որի արդյունքում երեխաները դուրս են մղվել աշխատանքի պրոցեսից[2]:

Խաղը նպաստում է երեխայի շփման, հաղորդակցման ունակությունների զարգացմանը: Ամենից առաջ խաղի միջոցով երեխաները սովորում են միմյանց հետ լիարժեք շփվել և հաղորդակցվել:

Աստիճանաբար երեխաների միջև շփումը դառնում է առավել ինտենսիվ և արդյունավետ:

Խաղում զարգանում է նաև երեխայի պահանջմունք - դրդապատճառային ոլորտը[3]: Խաղը նպաստում է նաև կամային հիշողության զարգացմանը, հաղթահարվում է այսպես կոչված ճանաչողական էգոցենտրիզմը: Հետևելով երեխաների խաղերին, կարելի է մեծ տեղեկատվություն քաղել նրա հոգեվիճակի, սոցիալական հարաբերությունների զարգացման վերաբերյալ:

Մարդկության պրակտիկայում խաղային գործունեությունը կատարվում է հետևյալ գործառույթները.

- զարգացնող(դա խաղի հիմնական գործառույթն է՝ զբաղեցնել, հաճույք պատճառել, ոգեշնչել, հետաքրքրություն առաջացնել),

---

[1]Шадриков В.Д., Готовность детей к обучению // Психология деятельности и способности человека. М.: Логос, 1996, էջ 14:

[2]Эльконин Д.Б., Психология игры 2-е изд// М.: Гумманитарный издательский цнтр-Владос 1999, էջ 104:

[3]Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009,էջ 41:

- հաղորդակցական (հաղորդակցման լեզվի յուրացում),
- խաղում ինքնակայացումը՝ որպես մարկային պոլիգոնի պրակտիկա,
- խաղաթերապևտիկ՝ բազմաբնույթ խոչընդոտների հաղթահարում, որոնք ծագում են կենսագործունեության այլ տեսակներում,
- ախտորոշող՝ նորմատիվային վարքագծից շեղումների բացահայտում, խաղի ընթացքում ինքնբացահայտում,
- ճշգրտման գործառույթ՝ անձնային ցուցանիշների կառուցվածքում դրական փոփոխությունների ներմուծում,
- միջազգային հաղորդակցման գործառույթ՝ բոլոր մարդկանց համար միասնական սոցիալ-մշակութային արժեքների յուրացում,
- սոցիալականացում՝ ընդգրկում հասարակական հարաբերությունների համակարգի մեջ, մարդկային համակեցության նորմերի յուրացում[4]:

Խաղը երեխայի միակ և ամենասիրած զաբաղմունքն է: Երեխան խաղում է ցանկացած պահին և միշտ: Այն թույլ է տալիս բավարարել շատ պահանջմունքներ, ինչպես օրինակ, զվարճանքի, հետաքրքրության, հավաքված էներգիայի օգտագործումը, ինքնահաստատումը և այլն:

Խաղերը զարգացնում են միտքը, բարձրացնում երևակայությունը, օգնում են արագ կողմնորոշվել, դրական են ազդում հիշողության վրա:

Խաղը՝ որպես երեխայի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է: Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց:

Խաղը երեխայի ներքին աշխարհը բերում է համապատասխանության իր ունեցած պատկերացումներին և բացում է հնարավորություններ այն բանի համար, որ երեխան ընդլայնի և զարգացնի արդեն ձեռք բերած ընդունակությունները:

Խաղը երեխայից պահանջում է այնպիսի որակներ, ինչպիսիք են շփվողականությունը, նախաձեռող լինելը, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կորորդինացնելու ընդունակությունը: Խաղերի միջոցով

[4]Գյուլամիրյան Ջ.,Նշված աշխ.,էջ 42:

երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, լուծել ներքին կոնֆլիկտները, բարձրացնում են ինքնագնահատականը:

Երեխաների սոցիալականացումը և խոսքի զարգացումը մանկավարժի ուսումնադաստիարակչական աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն է, որի իրականացումը նշանակում է՝ երեխային տալ ոչ միայն գիտելիքներ, այլև ուղղորդել ձևավորվել նրան որպես անհատականություն: Երեխաների մտավոր կարողությունների ձևավորման հիմնական խնդիրներից մեկը մտածողության և խոսքի զարգացումն է[5]:

Հոգևոր զարգացման այդ երկու՝միմյանց հետ սերտորեն կապվածկարողությունները ձևավորում և զարգանում են շրջապատող իրականությունը ճանաչելու ընթացքում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մանկավարժը մեծ ուշադրություն է դարձնում այն մեթոդներին ու եղանակներին, որոնց կիրառումը նպաստում է երեխաների մտավոր գործունեության, ինքնուրույն մտածողության ձևավորմանը, սովորեցնում է փոփոխվող իրադարձություններում օգտվել ձեռք բերված գիտելիքներից և փորձից, իր առջև դրված խնդիրների համապատասխան ճիշտ ընտրել անհրաժեշտ նյութերը, բառերը, և խոսքը:

Երեխային մտավոր աշխատանքի վարժեցնելու համար անհրաժեշտ է խաղը դարձնել հետաքրքիր, զբաղեցնող, միտք շարժող: Դրա համար կան տարբեր եղանակներ ու մեթոդներ, որոնց մեջ հատուկ տեղ են գրավվում ***դիդակտիկ խաղերը:***

Այդ խաղերի կազմակերպումը ու անցկացումը երեխաներին հնարավորություն է տալիս խաղի, խաղային ձևի միջոցով ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, իսկ մանկավարժին՝ զարգացնել երեխաների մտավոր գործունեության տարբեր կողմերը:

Դեռևս 18-րդ դարում, ժամանակի ականավոր մանկավարժ Ֆ. Ֆրյոբելը մանկական խաղը համարելով դաստիարակության հիմքը և բարձր գնահատելով դրա մանկավարժական նշանակությունը, իմի բերելով խաղի վերաբերյալ մինչ այդ եղած մտքերը առաջին փորձն է արել ստեղծելու դիդակտիկ խաղերի որոշակի համակարգ:

Երեխային մտավոր աշխատանքի տրամադրելու համար անհրաժեշտ է խաղը դարձնել հետաքրքիր, զբաղեցնող, միտք շարժող: Դրա համար կան տարբեր եղանակներ ու մեթոդներ, որոնց մեջ հատուկ տեղ են գրավում դիդակտիկ խաղերը:

---

[5]Зворыгина Е.В., Первые сюжетные игры малышей// М: Просвещение, 1988, էջ 152:

Այդ խաղերի ճիշտ կազմակերպումն ու անցկացումը երեխաներին հնարավորություն է տալիս խաղի, խաղային ձևի միջոցով ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, իսկ դաստիարակին՝ զարգացնել երեխաների մտավոր գործունեության տարբեր կողմերը: Երեխաների գիտելիքների ամրապնդման, նոր գիտելիքների հաղորդման նպատակով մանկապարտեզի կրտսեր խմբից սկսած անցկացվում են դիդակտիկ խաղեր:

Դիդակտիկ խաղերի առանձնահատկությունները որպես ուսուցման յուրահատուկ ձև ավելի ցայտուն են արտահայտվում, երբ դրանք համեմատում ենք պարապմունքների հետ:

Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ տարրական դասարաններում երեխաների ուսուցման տևական հետազոտությունները և տարիների փորձը ցույց են տվել, որ պարապմունքը ուսուցողական ուղղակի ներգործություն է, իսկ դիդակտիկ խաղերի ու վարժությունների հիմքում ընկած է սենսոր դաստիարակությունը: Հենց առարկաների զննումն ու փորձերը այդ վարժությունները տարբերում են պարապմունքներից:

ԳԼՈՒԽ 2. ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսուցողական խաղերը երեխայի կրթության և դաստիարակության հիմնական ձևերից են: Յուրաքանչյուր խաղ երեխային մի ինչ-որ նոր բան է սովորեցնում կամ ամրապնդում է նրա պատկերացումները[6]:

Բազմապիսի և բազմաբովանդակ են մանկական ուսուցողական խաղերը: Դրանք երեխային ծանոթացնում են նյութական մշակույթի գանձերի հետ, նրա առաջ բացում են բնության գաղտնիքները, տարրական գիտելիքներ են տալիս հասարակական երևույթների մասին[7]:

Խաղերի ընթացքում երեխան դիտում է, համեմատում, հակադրում և համակարգում է այս կամ առարկայի հատկանիշը, կատարում է մատչելի, տարրական վերլուծություններ և ընդհանրացումներ: Այդ խաղերը երեխայի մեջ միաժամանակ դաստիարակում են ճարպկություն, հնարամտություն, կազմակերպվածություն, գիտակցականություն, խաղի կանոնները կիրառելու, սեփական հետաքրքրությունները կոլեկտիվին ենթարկելու ունակություններ և հմտություններ:

Դիտակտիկ խաղերը ճիշտ է մանկան ստեղծագործություն չեն, նրանք մեծերի կողմից հորինած ու մտածած խաղալիքներ են, սակայն դրանք մեծ ուրախություն են պատճառում թե ավագ նախադպրոցականներին և թե կրտսեր ու միջին տարիքի դպրոցականներին:

Նրանք արագացնում են զննողական հատկությունների զարգացումը, նպաստում են տեսողության, հիշողության և դատողության զարգացմանը, հարստացնում են փոքրերի բառապաշարը: Դրանք խճանկարներ են, քառակուսիներ, կտրված նկարներ, լոտոներ, կոլեկտիվ խաղեր, եռանկյունիներ ու քառակուսիներ, հաշվիչներ ու տարբեր ձևեր են:

Երբ նախադպրոցականը քառակուսիներից ամբողջական բառեր ու նկարների ձևեր, պատկերներ է ստանում, նրա հրճվանքին ու ոգևորությանը չափ չի լինում:

---

[6]Эльконин Д.Б., Психология игры, 2-е изд. //М.: ВЛАДОС, 1999, էջ 174:
[7]Эльконин Д.Б.,Նշված աշխ., էջ 175:

Ուսուցողական խաղերի ժամանակ ճանաչողական տարրը զուգակցվում է հետաքրքրասիրության և հետաքրքրականության հետ[8]:

Այս խաղերը հետաքրքիր և նպատակասլաց կանցնեն, եթե պահպանվեն մի քանի հիմնական կանոններ՝ խաղի մասնակիցները, նախ պետք է տվյալ խաղի լուծման համար անհրաժեշտ գիտելիքներ ունենան, այլապես խաղը կկորցնի իր հմայքը և կդառնա ձանձրալի ժամանց, բացասաբար կազդի երեխայի մտավոր ուժերի հետագա զարգացման վրա:

Օրինակ, եթե խաղի մասնակիցը դեռևս չի ճանաչում տառերը, հետևապես նա քառակուսիներից բառեր չի կարող կազմել: Այդ խաղին մասնակցելով նա միայն տհաճություն կզգա:

Ուրեմն, մեծերը նրան այդ խաղը չպետք է առաջարկեն, իսկ այդ խաղալիքը, եթե նա նվեր է ստացել պետք է պահել և տալ որոշ ժամանակից հետո, երբ նա նախապատրաստված կլինի խաղին[9]:

Մեծ է խաղի դերը երեխաների մտավոր զարգացման գործում: Այստեղ ճշտվում և խորացվում են երեխաների գիտելիքները, պատկերացումները: Տանը կամ հատուկ կարիքավոր երեխաների համար նախատեսված հաստատություններում ստացած գիտելիքները խաղում պրակտիկորեն կիրառվում և զարգանում են: Այս կամ այն դերը կատարելու համար, երեխան պետք է իր պատկերացումները վերածի խաղային գործողությունների:

Խաղի ընթացքում երեխաների մտավոր ակտիվությունը միշտ կապված է երևակայության հետ: Դերի ընտրությունը, կատարումը, մտահղացման, իրականացման միջոցների հայթայթումը ենթադրում է երևակայության առկայություն:

Խաղն ունի բացառիկ նշանակություն երեխաների բարոյական հատկությունների ձևավորման հարցում: Խաղի ընթացքում երեխան յուրացնում է հասարակական վարքի նորմերը, մարդկանց վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ, նրանց փոխհարաբերությունները:

Օրինակ կան այնպիսի խաղեր, որոնք նպաստում են ատելության, կոպտության, դաժանության առաջացմանը և նյարդային համակարգի վրա բացասական

[8]Эльконин Д.Б.,Նշված աշխ., էջ 176:
[9]Эльконин Д.Б.,Նշված աշխ., էջ 177:

ազդեցություն են թողում: Վատ խաղերն, ինչպես և լավերն ունեն իրենց սովորույթները և երկար են ապրում:

Վատ խաղերը հիմնականում արտացոլում են հին կենցաղի, հին հարաբերությունների մնացորդները, որոնք վերջնականապես արմատախիլ չեն արված մարդկանց գիտակցությունից և կյանքից: Որպեսզի անցանկալի, բացասական խաղեր չառաջանան, երեխաներին սովորեցնում են տարբերել լավը վատից, ակտիվ ձգտում են դաստիարակում լավի և ատելություն՝ վատի նկատմամբ:

Դիդակտիկ խաղը ուսումնական խաղի տեսքով կազմակերպվող ուսումնական պարապմունքի տեսակն է, որն իրագործում է խաղային ակտիվ ուսուցման մի ծարք սկզբունքներ և որն առանձնանում է խաղային գործունեության կառուցվածքն ամրագրող կանոններով ու գնահատող համակարգերով:

Ըստ էության, դիդակտիկական խաղը կոլեկտիվ և նպատակադրված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում յուրաքանչյուր մասնակից և, ընդհանրապես, ամբողջ խումբը միավորված են գլխավոր խնդրի շուրջ և իրենց վարքն ուղղորդում են դեպի շահույթը. այն նաև ակտիվ կամ ինտերակտիվ ուսումնական գործունեություն է, որը վերաբերում է ուսումնասիրվող համակարգը (երևույթը, գործընթացը) նմանարկող մոդելին:

Դիդակտիկ խաղերի տարբերիչ առանձնահատկությունը՝ դրանցում խաղային իրադրության առկայությունն է, մի բան, որը մեթոդի հիմք է կազմում. մասնակիցների գործունեությունը ֆորմալիզացված է, այսիքն կան կանոններ, գնահատման խիստ համակարգ, որոշակի ժամանակացույց: Նշենք, որ դիդակտիկ խաղերը տարբերվում են գործնական խաղերից առաջին հերթի այն բանով, որ դրանցում բացակայում է լուծումների շղթան (հաջորդականությունը):

Դիդակտիկ խաղերը երեխաներին ճանաչողական գործունեություն ծավալելու հնարավորություն են ընձեռում: Վերջինս հաշվի առնելով կարելի է ասել, որ դիդակտիկ խաղերը.

- երեխաներին սովորեցնում են՝ ուսումնական գործընթացում ստեղծելով ուրախ, անկաշկանդ մթնոլորտ,
- երեխաների մեջ ձևավորում են սեփական գործունեությունը կազմակերպելու, ընկերների հետ համագործակցելու ունակություններ,

- ակտիվացնում են երեխաների մտածողությունը, ուշադրությունը, խոսքը և երևակայությունը:

Դիդակտիկ խաղերի նպատակն է սովորողին խաղալով սովորեցնել համեմատել, համադրել, դասակարգել, ընդհանրացնել, այսինքն՝ կատարել մտավոր գործողություն: Ընդ որում, ուսուցողական խնդիրն սովորողից գաղտնի է մնում և նրան թվում է, թե ինքն ուղղակի խաղում է:

Այս խաղերը մանկավարժների կողմից հատուկ կազմակերպված, կանոններով տարաբնույթ խաղեր են՝ ուղղված երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Դրանք ուղղված են երեխաների ուսուցման որոշակի խնդրի լուծմանը, բայց դրա հետ մեկտեղ դրանցում բացահայտվում են խաղային գործունեության դաստիարակչական և զարգացնող ազդեցությունը:

Դիդակտիկ խաղերի ընթացքը սովորաբար կազմակերպվում է՝ հաշվի առնելով նրա կառուցվածքային առանձնահատկությունները և բաղադրիչները, որոնք խաղին տալիս են ուսումնական բովանդակություն: Այդ կառուցվածքի հիմնական բաղադրամասերն են.

1. ուսուցողական խնդիրների առկայությունը. յուրաքանչյուր դիդակտիկ խաղի ժամանակ երեխաները պետք է ձեռք բերեն որոշակի գիտելիքներ, ունակություններ ու հմտություններ,
2. դաստիարակչական նշանակությունը, որը որոշվում է աշակերտների անձնային որակների վրա խաղի թողած մանկավարժահոգեբանական ազդեցություններով: Խաղի դաստիարակչական նշանակությունը որոշելու համար պետք է հստակեցնել, թե ինչ անձնային որակներ պետք է ձևավորվեն և զարգանան խաղի ժամանակ,
3. զարգացնող նշանակությունը պայմանավորված է խաղի՝ երեխայի անձի զարգացմանը նպաստող գործոններով,
4. խաղային գործողություններն իրականացնում են երեխաները՝ առաջնորդվելով խաղի խնդիրներով: Որքան բազմազան են երեխայի խաղային գործողությունները, այնքան հետաքրքիր է ընթանում խաղը և այնքան արդյունավետ կերպով կարող են լուծվել խաղի՝ ուսումնական, ճանաչողական, դաստիարակչական և զարգացնող խնդիրները,

5. խաղի ընթացքի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են դիդակտիկ նյութեր, պարագաներ և դրանց ճիշտ օգտագործումը խաղը կազմակերպելու համար,
6. ուսումնական գործունեությունը պետք է թաքնված լինի, բայց ոչ ամբողջությամբ երկրորդական համարվի,
7. խաղի կանոնները պիտի բխեն երեխաների շահերից՝ համապատասխան նրանց մտավոր, ֆիզիկական կարողություններին և հոգեկան գործընթացների զարգացման մակարդակից, իսկ լսողության խանգարում ունեցող երեխաների համար նաև՝ լսողության խանգարման աստիճանից, խոսքի մակարդակից,
8. խաղի ընթացքը պետք է կազմակերպվի խաղի կանոններին համապատասխան, և խաղացողների կողմից թույլ տված ցանկացած խախտում պետք է արժանանա համապատասխան արձագանքի,խաղի արդյունքների հանգամանալի վերլուծությունը և արդարացի գնահատումն ու ամփոփումը: Արդյունքների ամփոփում պետք է անցկացվի անմիջապես խաղի ավարտից հետո:

Դիդակտիկ խաղը երեխայի համար է, իսկ ուսուցչի կամ ավագների համար՝ ուսուցման միջոց: Դիդակտիկ խաղի նպատակն ուսումնական գործունեության ծանրաբեռնվածության թեթևացումն է:

Դիդակտիկ խաղերի ժամանակ կիրառվող խոսքային նյութում կարևոր է դիմելը, հաղորդելը, զգուշացնելը (գնա կամ գնացեք խաղալու, նստիր կամ նստեցեք սեղանի շուրջ, բաժանիր նկարները կամ քարտերը, ցույց տուր կամ ցույց տվեք, վերցրու կամ վերցրեք, թաքցրու կամ թաքցրեք, գուշակիր կամ գուշակեք, հիշիր կամ հիշեք, ով է առաջինը, ով հաղթեց, արագ, երկար, ուշացար և այլն), քանի որ այդ բառերը օգտագործվում են նաև առօրյա շփման ժամանակ:

Այդ խաղերը որպես ուսուցման ձև, իրենց բնույթով բարդ են, որովհետև դրանք միաժամանակ հետապնդում են երկու նպատակ՝ ուսուցողական և խաղային: Այստեղ երեխաները խաղալով սովորում են, իսկ դաստիարակը ղեկավարելով և մասնակցելով խաղին՝ միաժամանակ սովորեցնում է[10]:

Այս խաղերը նպաստում են ուշադրության, հիշողության, դիտունակության, ընկալման, կամային գործունեության զարգացմանը: Սա է պատճառը, որ դիդակտիկ

[10]Спиваковская А. С., Игра – это серьезно. А. С. Спиваковская. М. : Педагогика, 1981, էջ 79:

խաղերը դիտվում են որպես ուսուցման լավագույն մեթոդ: Սակայն այն կիրառելիս ուսուցիչը պետք է ցուցաբերի մանկավարժական վարպետություն: Կրթադաստիարակչական գործընթացին նախապատրաստվելիս՝ դաստիարակը պետք է ճիշտ ընտրի խաղը, որոշի խաղի մեջ յուրաքանչյուր երեխայի դերը՝ հաշվի առնելով նրա անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ներուժը և դրական կողմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք մի շարք եզրահանգումների.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ խաղը՝ որպես երեխայի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է: Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց:
- Խաղը երեխայի ներքին աշխարհը բերում է համապատասխանության իր ունեցած պատկերացումներին և բացում է հնարավորություններ այն բանի համար, որ երեխան ընդլայնի և զարգացնի արդեն ձեռք բերած ընդունակությունները:
- Խաղը երեխայից պահանջում է այնպիսի որակներ, ինչպիսիք են շփվողականությունը, նախաձեռող լինելը, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կորորդինացնելու ընդունակությունը: Խաղերի միջոցով երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, լուծել ներքին կոնֆլիկտները, բարձրացնում են ինքնագնահատականը:
- Ուսուցողական խաղերը երեխայի կրթության և դաստիարակության հիմնական ձևերից են: Յուրաքանչյուր խաղ երեխային մի ինչ-որ նոր բան է սովորեցնում կամ ամրապնդում է նրա պատկերացումները:
- Բազմապիսի և բազմաբովանդակ են մանկական ուսուցողական խաղերը: Դրանք երեխային ծանոթացնում են նյութական մշակույթի գանձերի հետ, նրա առաջ բացում են բնության գաղտնիքները, տարրական գիտելիքներ են տալիս հասարակական երևույթների մասին:
- Խաղերի ընթացքում երեխան դիտում է, համեմատում, հակադրում և համակարգում է այս կամ առարկայի հատկանիշը, կատարում է մատչելի, տարրական վերլուծություններ և ընդհանրացումներ: Այդ խաղերը երեխայի մեջ միաժամանակ դաստիարակում են ճարպկություն, հնարամտություն,

կազմակերպվածություն, գիտակցականություն, խաղի կանոնները կիրառելու, սեփական հետաքրքրությունները կոլեկտիվին ենթարկելու ունակություններ և հմտություններ:

- Դիդակտիկ խաղը ուսումնական խաղի տեսքով կազմակերպվող ուսումնական պարապմունքի տեսակն է, որն իրագործում է խաղային ակտիվ ուսուցման մի ծարք սկզբունքներ և որն առանձնանում է խաղային գործունեության կառուցվածքն ամրագրող կանոններով ու գնահատող համակարգերով:
- Ըստ էության, դիդակտիկական խաղը կոլեկտիվ և նպատակադրված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում յուրաքանչյուր մասնակից և, ընդհանրապես, ամբողջ խումբը միավորված են գլխավոր խնդրի շուրջ և իրենց վարքն ուղղորդում են դեպի շահույթը. այն նաև ակտիվ կամ ինտերակտիվ ուսումնական գործունեություն է, որը վերաբերում է ուսումնասիրվող համակարգը (երևույթը, գործընթացը) նմանարկող մոդելին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009թ.:
2. Зворыгина Е.В., Первые сюжетные игры малышей// М: Просвещение, 1988.
3. Спиваковская А. С., Игра – это серьезно. А. С. Спиваковская. М. : Педагогика, 1981.
4. Шадриков В.Д., Готовность детей к обучению // Психология деятельности и способности человека. М.: Логос, 1996.
5. Эльконин Д.Б., Психология игры 2-е изд// М.: Гумманитарный издательский цнтр-Владос 1999.
6. Эльконин Д.Б., Психология игры, 2-е изд. //М.: ВЛАДОС, 1999.